LVMH խումբ

Մասնակարգի վարվեցողության կանոնագիրք

LVMH

LVMH
Մատակարարի վարվեցողության կանոնագիրք

LVMH խումբը («LVMH խումբ»)[1] ներառում է բացառիկ ձեռնարկություններ, որոնք նախագծում, ստեղծում, արտադրում և/կամ վաճառում են բարձրորակ ապրանքներ կամ ծառայություններ: LVMH խումբը մեծ կարևորություն է տալիս ապահովելուն, որ իր մատակարարները (ներառյալ, առանց սահմանափակման, ծառայություններ տրամադրողները, դիստրիբյուտորները, արտադրողները, սեփականատերերը, ինչպես նաև ցանկացած երրորդ կողմ, որը փոխհարաբերություն ունի LVMH խմբի որևէ կազմակերպության հետ) և նրանց ենթակապալառուները (համատեղորեն՝ «Մատակարարներ») պահպանեն LVMH խմբի ընդհանուր կանոնները, գործելակերպերը և սկզբունքները՝ կապված աշխատանքային ստանդարտների և սոցիալական պատասխանատվության, շրջակա միջավայրի պաշտպանության, էթիկայի և գործարար բարեվարքության հետ:

Հետևաբար, LVMH խումբը հաստատում և խրախուսում է օրինակելի հարաբերություններ իր բոլոր մատակարարների հետ՝ հիմնված պատասխանատվության, արդարության և բարեվարքության վրա:

Ուստի, LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է հարգել այս մատակարարների Վարվեցողության կանոնագրքում («Կանոնագիրք») ամրագրված սկզբունքները և ապահովել, որ իրենց սեփական մատակարարները վարվեն նույն կերպ՝ LVMH խմբի համար իրականացվող իրենց գործունեության ընթացքում:

Իր գործունեության ընթացքում LVMH խումբը պարտավորվում է հետևել բոլոր կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, ազգային և միջազգային կոնվենցիաներին, ինչպես նաև լավագույն փորձին՝ կապված, մասնավորապես, աշխատանքային ստանդարտների և սոցիալական պատասխանատվության, շրջակա միջավայրի պաշտպանության, էթիկայի և գործարար բարեվարքության հետ:

LVMH խումբն ակնկալում է իր մատակարարներից ցուցաբերել միևնույն հարգանքը կիրառելի օրենքների, կանոնակարգերի, կոնվենցիաների, ինչպես նաև էթիկայի և գործարար սկզբունքների նկատմամբ՝ իրենց սեփական ընկերությունների կառավարման գործընթացում: Ուստի, LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է խստորեն հետևել այս ստանդարտներին:

Երբ ազգային օրենսդրությունը կամ այլ կիրառելի կանոնակարգեր և սույն Կանոնագիրքը կարգավորում են միևնույն հարցերը տարբեր ստանդարտների հիման վրա, ապա պետք է կիրառվեն ամենաբարձր ստանդարտները և ամենախիստ սահմանափակող դրույթները:

LVMH խումբն աշխատում է այն մատակարարների հետ, որոնք համաձայնում են կատարել սույն Կանոնագրքի պահանջները և սկզբունքները, որոնք սահմանված են Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրում, Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ-ի ուղեցույցներում, Միավորված ազգերի կազմակերպության Կանանց հզորացման սկզբունքներում, և համաձայնում են ապահովել, որ իրենց սեփական մատակարարները վարվեն նույն կերպ՝ LVMH խմբի համար իրականացվող իրենց գործունեության ընթացքում:

Որևէ մատակարարի կողմից սույն Կանոնագրքի պահանջները չկատարելու դեպքում LVMH խմբի յուրաքանչյուր կազմակերպություն, որը գործարար փոխհարաբերություն ունի տվյալ մատակարարի հետ, իրեն իրավունք է վերապահում պահանջել խախտումների ուղղում, կասեցնել գնումները, հրաժարվել գնման պատվերի հիման վրա կատարվող առաքումից և վերադարձնել մատակարարից ստացած ցանկացած ապրանք՝ մինչև խախտումները վերացվեն, ինչպես նաև կարող է դադարեցնել իր գործարար հարաբերությունները տվյալ մատակարարի հետ՝ ի թիվս LVMH խմբում այդպիսի կազմակերպության (կազմակերպությունների) համար հասանելի այլ իրավունքների կամ պաշտպանության միջոցների:

[1] LVMH խումբ. այս Կանոնագրքում LVMH խմբին արված հղումները ներառում են LVMH Moët Hennessy Louis Vuitton SE-ն և LVMH Moët Hennessy Louis Vuitton SE-ի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարվող յուրաքանչյուր կազմակերպություն, որը կարող է գործել մյուսներից անկախ, այդ թվում՝ տեղեկատվության վերահսկման առումով, ինչպես նախատեսված է այս Կանոնագրքում:

1. Աշխատանքային ստանդարտներ և սոցիալական պատասխանատվություն

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է ցուցաբերել օրինակելի սոցիալական պատասխանատվություն իրենց գործունեության ընթացքում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԵԼՔ

Մինչև 16 տարեկան երեխաների աշխատանքը խստիվ արգելվում է: Այն երկրներում, որտեղ տեղական օրենքները սահմանում են երեխաների աշխատանքի ավելի բարձր տարիք կամ սահմանում են 16 տարեկանից հետո պարտադիր կրթության պահանջ, ապա կիրառելի է ամենաբարձր տարիքը: Մինչև 18 տարեկան աշխատողները չպետք է կատարեն արտաժամյա կամ վտանգավոր աշխատանք կամ աշխատեն գիշերային հերթափոխով: Մատակարարները կարող են կիրառել իրավաչափ, օրինական, աշխատավայրում պատշաճ կերպով կառավարվող վերապատրաստման ծրագրեր, ինչպես օրինակ՝ ուսանողական պրակտիկաներ:

ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԱՐԳԵԼՔ

LVMH խումբը չի հանդուրժում շահագործման կամ ապօրինի աշխատանքի որևէ տեսակ իր մատակարարման շղթայում, ինչպիսիք են՝ հարկադիր աշխատանքը կամ մարդկանց թրաֆիքինգը: Մատակարարների կողմից հարկադիր աշխատանքի, ստրկության, տաժանակիր աշխատանքի կամ մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի կամ աշխատանքի թույլտվության փաստաթղթերի թաքցնումը կամ աշխատողներից պարտավորագրերի ներկայացման պահանջը կամ որևէ այլ սահմանափակող միջոցի օգտագործումը խստիվ արգելվում է: Բոլոր աշխատողներն իրավունք ունեն ազատորեն ընդունվել աշխատանքի կամ հեռանալ: Մատակարարները պետք է հարգեն աշխատողների տեղաշարժի ազատությունը: Մատակարարները չեն կարող աշխատողներից պահանջել աշխատել՝ իրենց կամ երրորդ կողմի պարտքը մարելու համար:

ԱՊՕՐԻՆԻ, ԳԱՂՏՆԻ,և ՉՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Մատակարարները պարտավոր են պահպանել բոլոր կիրառելի կանոնակարգերը՝ կանխելու ապօրինի, գաղտնի և չհայտարարագրված աշխատանքը:

ՀԵՏԱՊՆԴՄԱՆ և ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Մատակարարները պարտավոր են իրենց աշխատողներին վերաբերվել հարգանքով և արժանապատվությամբ: Մատակարարները պետք է ձեռնպահ մնան և արգելեն ցանկացած վարքագիծ և գործելակերպ, որը հանգեցնում է մարմնական պատժի, ֆիզիկական, սեռական, խոսքային կամ հոգեբանական հետապնդման կամ չարաշահման ցանկացած այլ տեսակի:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

LVMH խումբն ակնկալում է, որ իր մատակարարները բոլոր աշխատողների նկատմամբ ցուցաբերեն հավասար և արդարացի վերաբերմունք: Մատակարարները չեն կարող որևէ տեսակի խտրականություն կիրառել՝ կապված մասնավորապես աշխատավարձի, աշխատանքի ընդունման, ուսուցման հասանելիության, առաջխաղացման, մայրության պաշտպանության հետ, և հեռացնել աշխատանքից՝ սեռի, ռասայական կամ էթնիկական ծագման, կրոնի, տարիքի, հաշմանդամության, սեռական կողմնորոշման, քաղաքական պատկանելության, միության անդամության, ազգության, գենդերային ինքնության, նախնիների կամ սոցիալական ծագման վրա:

ԱՐԴԱՐԱՑԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ և ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մատակարարները պետք է, նվազագույնը, ճշգրիտ աշխատավարձ վճարեն օրինական վճարման եղանակով, ժամանակին և կանոնավոր կերպով՝ ամիսը մեկ անգամ կատարվող վճարումից ոչ պակաս, աշխատողներին փոխհատուցեն արտաժամյա ժամերը օրինական դրույքաչափով և կատարեն աշխատողների արտոնություններին վերաբերող բոլոր իրավական պահանջները: Եթե տվյալ երկրում օրինական նվազագույն աշխատավարձ կամ արտաժամյա աշխատանքի համար սահմանված դրույքաչափ չկա, ապա մատակարարները պետք է ապահովեն, որ աշխատավարձն առնվազն հավասար լինի տվյալ արդյունաբերական ոլորտի միջին նվազագույն աշխատավարձին, իսկ արտաժամյա վարձատրությունը առնվազն նույնը լինի, ինչ սովորական ժամական վճարումը: Աշխատավարձը պետք է բավարար լինի՝ աշխատողների հիմնական կարիքները բավարարելու և որոշակի հայեցողական եկամուտ ապահովելու համար:

Աշխատավարձից պահումները չեն կարող կիրառվել որպես կարգապահական միջոց: Մատակարարները պետք է բոլոր աշխատողներին տեղեկացնեն աշխատավարձի կառուցվածքի և վճարման ժամկետների մասին: LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է երաշխավորել, որ բոլոր աշխատողները ստանան արտոնություններ, որոնք նախատեսված են կիրառելի օրենսդրությամբ կամ այլ կիրառելի համատեղ աշխատանքային պայմանագրերով, ընկերության պայմանագրերով և այլ կիրառելի բանակցված անհատական կամ համատեղ պայմանագրերով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ

Մատակարարները պետք է կատարեն բոլոր տեղական օրենքների և կանոնակարգերի պահանջները, որոնք վերաբերում են աշխատանքային ժամերին, որոնք ոչ մի դեպքում չպետք է գերազանցեն միջազգայնորեն ճանաչված չափանիշներով (ինչպես օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության) սահմանված առավելագույն չափը: Մատակարարները չեն կարող սահմանել չափազանց երկար արտաժամյա աշխատանքային ժամեր: Շաբաթական աշխատած ժամերի ընդհանուր քանակը, ներառյալ արտաժամյա աշխատանքը, չի կարող գերազանցել օրինական սահմանաչափը: Աշխատողներն իրավունք ունեն օգտվելու գործող օրենսդրությամբ սահմանված նվազագույն հանգստյան օրերից և ունենան առնվազն մեկ հանգստյան օր՝ յուրաքանչյուր յոթնօրյա ժամանակահատվածում:

ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է հարգել և ճանաչել աշխատողների համատեղ բանակցելու և իրենց ընտրությամբ աշխատանքային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց միանալու իրավունքը՝ առանց որևէ պատժամիջոցի, խտրականության կամ հետապնդման: Անհրաժեշտության դեպքում՝ մատակարարները պետք է աշխատողների ներկայացուցիչներին տրամադրեն համապատասխան միջոցներ՝ իրենց իրավունքներն իրացնելու համար: Աշխատողների ներկայացուցիչների նկատմամբ ահաբեկում, սպառնալիքներ կամ խտրական գործելաոճ կիրառելն արգելվում է:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

LVMH-ի Առողջապահության և անվտանգության քաղաքականության համաձայն՝ մատակարարներից պահանջվում է իրենց աշխատողների համար ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր՝ դժբախտ պատահարներից, մարմնական վնասվածքներից կամ վտանգավոր ազդեցություններից խուսափելու համար, որոնք կարող են պատճառվել, կապված լինել կամ առաջանալ իրենց աշխատանքի հետևանքով, ներառյալ սարքավորումների շահագործման, քիմիական արտադրանքի օգտագործման կամ աշխատանքի հետ կապված ճանապարհորդության ընթացքում: Մատակարարներից պահանջվում է սահմանել ընթացակարգեր և կազմակերպել դասընթացներ՝ ցանկացած վտանգ հայտնաբերելու, դրանից խուսափելու և հնարավորինս մեղմելու համար, որը կարող է ռիսկ ներկայացնել անձնակազմի առողջության, հիգիենայի և անվտանգության համար: Մատակարարներից պահանջվում է, նվազագույնը, պահպանել այս մասին բոլոր կիրառելի տեղական և միջազգային կանոնակարգերն ու օրենքները: Անհրաժեշտ է ձևակերպել առողջապահության և անվտանգության հրահանգներ և լայնորեն տարածել դրանք: Աշխատողների կողմից պահանջներին համապատասխանությունը պետք է պարբերաբար գնահատել: Աշխատողները պետք է ապահովված լինեն իրենց գործունեությանը համապատասխանող պաշտպանիչ սարքավորումներով: Նշված սկզբունքները կիրառելի են նաև մատակարարների կողմից տրամադրվող բնակարանների համար:

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես ողջ աշխարհում ներկայություն ունեցող պատասխանատու և հանձնառու խումբ՝ LVMH խումբը ձգտում է դրական ազդեցություն ունենալ այն հասարակությունների և տարածաշրջանների վրա, որտեղ գործում է, կանխել տեղական համայնքներին հասցվող ցանկացած վնաս և իր մատակարարներից պահանջում է կիրառել նույն գործելաոճը: Բնիկ համայնքների հետ աշխատելիս, ինչպես սահմանված է Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրով, մատակարարները պետք է ձեռք բերեն ազատ, նախնական և տեղեկացված համաձայնություն (FPIC) և ապահովեն նրանց մարդու իրավունքների պաշտպանության կարողությունները:

2. Բնապահպանական համապատասխանություն և իրականացում

LVMH խումբն ընդունել է բնապահպանական ռազմավարություն և ձեռնարկում է հատուկ միջոցներ՝ կոնկրետ ծրագրի շրջանակներում շրջակա միջավայրը պաշտպանելու ուղղությամբ, որը ներառում է համագործակցություն իր մատակարարների հետ՝ մատակարարման ողջ շղթայում լավագույն փորձի կիրառումն ապահովելու համար:

LVMH խումբն ակնկալում է, որ իր մատակարարները հանձնառու լինեն այս պարտավորությանը: Նա խրախուսում է իր մատակարարների նախաձեռնությունները՝ նվազեցնելու իրենց գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ կանաչ տեխնոլոգիաների կիրառման և բնապահպանական ցուցանիշների տրամադրման միջոցով LVMH խմբի այն կազմակերպություններին, որոնց հետ նրանք, անհրաժեշտության դեպքում, գործարար հարաբերություններ ունեն:

LVMH խումբը պահանջում է, որ իր մատակարարները պահպանեն տեղական և միջազգային բնապահպանական օրենքները, կանոնակարգերը և լավագույն մասնագիտական ստանդարտները, ձեռք բերեն բոլոր անհրաժեշտ բնապահպանական թույլտվությունները և կարողանան ապացուցել հետևյալ կետերի արդյունավետ իրականացումը.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ…)

- Բնապահպանական կառավարման համակարգի կիրառում (օրինակ՝ LWG հավաստագրում կաշեգործարանների համար, ZDHC ծրագիր նորաձևության և կաշվե իրերի մատակարարների համար, կամ ISO 14001 հավաստագրում),
- Իրենց արտադրական տեղամասերի և արտադրական ռեսուրսների բնապահպանական գործունեության բարելավում, մասնավորապես՝ թափոնների պատշաճ կառավարման, օդի, կեղտաջրերի և հողի (ներառյալ ջրաբեր շերտերի) աղտոտվածության վերացման, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջոցով՝ շեշտը դնելով վերականգնվող էներգիայի օգտագործման, ջրի և էներգիայի սպառման նվազեցման վրա,
- Միջոցառումների իրականացում՝ ապահովելու, որ այն աշխատողները, որոնց գործունեությունը անմիջականորեն ազդում է շրջակա միջավայրի վրա, վերապատրաստվեն, մասնագիտանան և ունենան անհրաժեշտ ռեսուրսներ իրենց աշխատանքը արդյունավետորեն կատարելու համար՝ հաշվի առնելով վերոնշյալ բնապահպանական պարտավորությունները:

ՀՈՒՄՔ, ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ և ԱՊՐԱՆՔՆԵՐ

- Օժանդակություն բնապահպանական գործունեության շարունակական բարելավմանը LVMH խմբի արտադրանքի թողարկման ողջ շրջափուլի ընթացքում: Օրինակ՝ մատակարարները պարտավորվում են տեղեկացնել LVMH խմբի այն կազմակերպությանը (կազմակերպություններին), որոնց հետ գործարար փոխհարաբերություններ ունեն, ամենապատասխանատու տարբերակների մասին (հավաստագրված նյութեր, վերամշակված նյութեր, վերականգնող գյուղատնտեսական եղանակով ստացված նյութեր….), եթե դրանք ողջամտորեն առկա են: Պատրաստի կամ կիսաֆաբրիկատ ապրանքները, որոնք կրում են տարբերակիչ ապրանքային նշաններ, դիզայնի իրավունքներ կամ մտավոր սեփականության այլ ակտիվներ, որոնք պատկանում են LVMH խմբի կազմակերպություններին, որոնք չեն պատվիրվել կամ մերժվել են, պետք է կառավարվեն LVMH խմբի համապատասխան կոնտակտային անձի հանձնարարությամբ,
- Միջոցառումներ՝ ապահովելու արտադրանքի և հումքի անվտանգ քիմիական կառավարումը և քիմիական պահանջների համապատասխանությունը գործող ազգային և միջազգային կանոնակարգերին և լավագույն մասնագիտական ստանդարտներին, ներառյալ REACH կանոնակարգերը և LVMH-ի սահմանափակված նյութերի ցանկը,
- Միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանմանը և համապատասխան բնապահպանական միջազգային չափանիշների և կանոնակարգերի պահանջների կատարմանը, ինչպիսին է՝ CITES-ը,
- Միջոցառումներ՝ ապահովելու զրոյական ապօրինի անտառահատումներ և զրոյական անտառահատումներ բարձր ռիսկային տարածքներում,
- Միջոցառումներ՝ հսկողություն երաշխավորելու, հումքի ծագման վերաբերյալ տեղեկատվության փոխանակելու և օգտագործվող հումքի և նյութերի համապատասխանությունն ապահովելու նպատակով,
- Միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն մատակարարման ողջ շղթայում՝ կենդանիների բարեկեցությունը և LVMH-ի Կենդանական հումքի կանոնադրության մեջ սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

3. Էթիկայի և գործարար բարեվարքության պահանջներ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է ցուցաբերել օրինակելի բարեվարքություն իրենց բիզնես գործունեության ընթացքում: LVMH խումբն իր մատակարարներից պահանջում է իրենց բիզնես գործունեության ընթացքում գործել համապատասխան տեղական, ազգային և միջազգային կիրառելի օրենքների և կանոնակարգերի համաձայն, մասնավորապես հետևյալ ոլորտներում՝ կոռուպցիայի և փողերի լվացման արգելում, մրցակցության հարգում, ինսայդերական առևտրի կանխարգելում և անձնական տվյալների պաշտպանություն:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔ

LVMH խումբը կիրառում է զրոյական հանդուրժողականության քաղաքականություն կոռուպցիայի և ազդեցիկ դիրքի չարաշահման նկատմամբ: LVMH խումբն իր մատակարարներից պահանջում է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ կանխելու, հայտնաբերելու և կարգապահության ենթարկելու կոռուպցիայի կամ ազդեցության չարաշահման ցանկացած դեպք, որն ուղղակի կամ անուղղակի ձևով դրսևորվում է իրենց գործունեության ընթացքում: Դա ներառում է, այսպես կոչված, աշխատանքի դյուրացման կամ այլ արտոնություններ ստանալու համար վճարների արգելքը, որը տրամադրվում է պետական պաշտոնյաներին սովորական ոչ հայեցողական գործողությունների համար:

ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նվերները կամ հյուրասիրությունները կարող են համարվել քաղաքավարության ընդունելի արտահայտություններ լավ գործարար հարաբերությունների համատեքստում, եթե դրանք սահմանափակված են իրենց ծավալով և արժեքով, տրվում են բաց և թափանցիկ կերպով, թույլատրված են կիրառելի օրենսդրության և կանոնակարգերի համաձայն, ընդունված են այն երկրում, որտեղ դրանք տրվում են, նախատեսված են հարգանք կամ երախտագիտություն արտահայտելու համար, և չեն առաջարկվում՝ դրա դիմաց ինչ-որ բան ստանալու ակնկալիքով: Որոշ դեպքերում, նման գործելակերպերը կարող են ենթարկվել հակակոռուպցիոն կանոնակարգերի կամ այլ իրավական պահանջների, ուստի չափազանց կարևոր է, որ մատակարարները LVMH խմբի ցանկացած անդամի հետ իրենց գործարար հարաբերությունների ժամանակ պարտավորվեն կատարել կիրառելի կանոնների և կանոնակարգերի պահանջները:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է պարտավորվել գործադրել ամեն ջանք՝ կանխելու այնպիսի իրավիճակների առաջացումը, որոնք ստեղծում են փաստացի, ենթադրյալ կամ հնարավոր շահերի բախում LVMH խմբի որևէ անդամի հետ իրենց գործարար հարաբերություններում:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԱՐԳԵԼՔ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցառումները՝ կանխելու իրենց գործունեության օգտագործումը որպես փողերի լվացման միջոց:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔ

Մատակարարները պարտավորվում են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ կանխելու գերիշխող դիրքի չարաշահումը, համաձայնեցված գործելակերպերը կամ մրցակիցների միջև ապօրինի համաձայնությունները, ինչպիսիք են՝ գների կամ գների միջակայքերի սահմանումը (գների ամրագրում) կամ շուկայի բաշխումները կամ բոյկոտները, որոնք սահմանափակում են որոշակի ապրանքների արտադրությունը:

ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է հրաժարվել բաժնետոմսերի վաճառքից կամ առքից LVMH – Moët Hennessy Louis Vuitton SE-ում («LVMH բաժնետոմսեր»), ինչպես նաև LVMH բաժնետոմսերի[2] հետ կապված ցանկացած ածանցյալ կամ այլ ֆինանսական գործիք՝ հիմնվելով ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված ներքին տեղեկատվության վրա:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է պարտավորվել ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ երաշխավորելու մասնագիտական գաղտնիքների և այլ ոչ հրապարակային տեղեկատվության գաղտնիությունը, որոնք նրանք ստանում են LVMH խմբի հետ իրենց գործարար հարաբերությունների ընթացքում:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող բոլոր կիրառելի օրենքների և կանոնակարգերի պահանջները կատարելու համար:

ՄԱՔՍԱՅԻՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է պահպանել կիրառելի մաքսային օրենքներն ու կանոնակարգերը, ներառյալ ներմուծման հետ կապված օրենքներն ու կանոնակարգերը, և ներմուծող երկիր ապրանքների փոխադրման արգելքը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

LVMH խումբը իր մատակարարներից պահանջում է հարգել բոլոր կիրառելի միջազգային առևտրային սահմանափակումները և տնտեսական և առևտրային պատժամիջոցները՝ հաշվի առնելով այս միջոցների ցանկացած փոփոխություն, ինչպես նաև արտահանման և ներմուծման հսկողության վերաբերյալ բոլոր կիրառելի օրենքներն ու կանոնակարգերը:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մատակարարներից պահանջվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պաշտպանելու LVMH խմբի մաս կազմող այն կազմակերպությունների ռեսուրսներն ու ակտիվները, որոնց հետ նրանք ունեն գործարար հարաբերություններ, մասնավորապես՝ նրանց ապրանքանիշի պատկերը և մտավոր սեփականության իրավունքները:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

LVMH խումբն ակնկալում է, որ իր մատակարարները չափազանց ուշադիր լինեն իրենց հրապարակային հայտարարությունների նկատմամբ, մասնավորապես համացանցում և սոցիալական ցանցերում, և երաշխավորեն, որ այդ հայտարարություններից ոչ մեկը չվերագրվի LVMH խմբին պատկանող որևէ կազմակերպության կամ նրանց բաժնետերերին, տնօրեններին, պաշտոնյաներին կամ աշխատակիցներին, և դրանք համապատասխանեն գաղտնիություն պահպանելու և մասնագիտական գաղտնիքների նկատմամբ հարգանք ցուցաբերելու մատակարարների պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Մատակարարներից պահանջվում է հստակ և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել օգտագործվող մեթոդների և ռեսուրսների, արտադրական վայրերի և մատակարարվող ապրանքների կամ ծառայությունների բնութագրերի վերաբերյալ, ինչպես նաև զերծ մնալ ապակողմնորոշող հայտարարություններից:

[2] LVMH-ի բաժնետոմսերի հետ կապված ֆինանսական գործիքները ներառում են Christian Dior SE-ի բաժնետոմսերը:

4. Մատակարարների բողոքարկման մեխանիզմ և LVMH-ի թեժ գիծ

ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Մատակարարները պետք է հաստատեն գործընթացներ կամ մեխանիզմներ, որոնց միջոցով աշխատողները և շահագրգիռ կողմերը կարող են բարձրաձայնել մտահոգիչ խնդիրները՝ չվախենալով վրեժխնդրությունից կամ բացասական ազդեցությունից:

LVMH-Ի ԹԵԺ ԳԻԾ

Այն մատակարարները, որոնք տեղեկանում են LVMH-ի Վարվեցողության կանոնագրքի, ուղեցույցների, սկզբունքների և քաղաքականության և/կամ կիրառելի օրենքների և կանոնակարգերի խախտումների (կամ խախտումների ռիսկի) մասին, խրախուսվում են իրենց մտահոգությունը հայտնել LVMH խմբի մաս կազմող այն կազմակերպության (կազմակերպությունների) կոնտակտային անձին (անձանց), որի հետ նրանք գործարար հարաբերություններ ունեն: Էթիկական և այլ մտահոգություններ բարձրաձայնելու այս ուղուց բացի, մատակարարներին հասանելի է նաև LVMH-ի թեժ գիծը՝ առցանց հարթակ, որը գաղտնի և անվտանգ միջոց է LVMH-ի Վարվեցողության կանոնագրքի, ուղեցույցների, սկզբունքների և քաղաքականության և/կամ կիրառելի օրենքների խախտումների (կամ խախտումների ռիսկի) մասին բարեխղճորեն զեկուցման համար: Սխալ վարքագծի մասին բարեխղճորեն արված զեկույցը ազդեցություն չի ունենա LVMH խմբի հետ մատակարարի հարաբերությունների վրա:

LVMH-ի թեժ գծին, որը նաև հասանելի է LVMH խմբի աշխատակիցների և այլ արտաքին շահագրգիռ կողմերի համար, հնարավոր է մուտք գործել LVMH.com կայքի միջոցով կամ ուղղակիորեն՝ https://alertline.lvmh.com:

5. Տեղեկատվության վերահսկողություն և մուտք

LVMH խումբն իր մատակարարներից պահանջում է ստեղծել համապատասխան և արդյունավետ կառավարման համակարգեր, քաղաքականություն, ընթացակարգեր և դասընթացներ՝ սույն Կանոնագրքի պահանջների շարունակական կատարումն ապահովելու համար:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

LVMH խմբի կազմակերպություններից յուրաքանչյուրն իրեն իրավունք է վերապահում վերահսկելու մատակարարների կողմից սույն Կանոնագրքով սահմանված սկզբունքների պահպանումը: Այս վերահսկողությունը կիրականացվի LVMH խմբի կազմակերպությունների կամ պատշաճ լիազորված երրորդ անձանց կողմից: Ցանկացած վերահսկողություն կամ աուդիտ կառնչվի LVMH խմբի համապատասխան կազմակերպության և մատակարարի միջև գործարար հարաբերություններին: Եթե մատակարարը, համաձայն օրենքի, ենթակա է որոշակի մասնագիտական պարտավորությունների, ապա ցանկացած վերահսկողություն կամ աուդիտ կիրականացվի՝ հաշվի առնելով այդ մասնագիտական պարտավորությունները: Մատակարարները պարտավոր են բարելավել կամ շտկել հայտնաբերված թերությունները: LVMH խմբի կազմակերպությունները կարող են նաև աջակցել մատակարարներին լավագույն փորձի ներդրման և իրականացման հարցում՝ անհամապատասխանության խնդիրները լուծելու համար:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔ

Ըստ պահանջի՝ մատակարարները պետք է տրամադրեն օժանդակ փաստաթղթեր կամ տեղեկություններ, որոնք հաստատում են սույն Կանոնագրքի պահանջների լիարժեք կատարումը:

6. Հաստատում

Որպես LVMH խմբի մաս կազմող կազմակերպության հետ գործարար հարաբերություն հաստատելու պայման՝ ստորև նշված մատակարարը հաստատում է, որ կապահովի համապատասխանություն սույն Կանոնագրքին և դրա պահանջներին:

Կատարվել է՝ ..... (օր) ..... (ամիս), ... (տարի)

Մատակարարի անուն՝ .....

Մատակարարի հասցե՝ .....

Մատակարարի DUNS #՝ .....

Մատակարարի ներկայացուցչի անուն և պաշտոն՝ .....

Մատակարարի ներկայացուցչի ստորագրություն՝ .....

Կնիք (եթե կիրառելի է)՝ .....

TIFFANY & CO.

LVMH ընկերության Մատակարարների Գործարար էթիկայի կանոնների Հավելված

Ի լրումն LVMH ընկերության Մատակարարների Գործարար էթիկայի Կանոնների («Կանոններ») ամրագրված սկզբունքների՝ ներքոստորագրյալ մատակարարը, վաճառողը, խորհրդատուն, դիստրիբյուտորը, մանրածախ վաճառողը, բրոքերը, վարձատուն, համատեղ ձեռնարկության գործընկերը կամ այլ մասնագետ կամ ներկայացուցիչ (իր դուստր ու փոխկապակցված ձեռնարկությունների հետ, «Գործընկեր») համաձայնում է հետևել սույն Հավելվածում («Կանոնների սույն Հավելվածում») շարադրված սկզբունքներին և պահանջներին՝ «Tiffany & Co.» ընկերությանը և նրա դուստր ձեռնարկությունների համար (միասնաբար՝ «Tiffany») ապրանքներ և ծառայություններ արտադրելիս և դրանք մատակարարելիս: Գործընկերը հասկանում է, որ Կանոնների սույն Հավելվածն օգտագործվում է ի լրումն Կանոններին և «Tiffany & Co. » ընկերության՝ Համապատասխանության Քաղաքականությունների ցանկացած այլ Հավելվածների՝ ստորագրված Գործընկերոջ կողմից (կամ կցված «Tiffany» ընկերության հետ որևէ պայմանագրի), և որ Կանոնների սույն Հավելվածի կամ այդպիսի Համապատասխանության Քաղաքականությունների Հավելվածների միջև որևէ հակասության կամ անհամապատասխանության դեպքում «Tiffany» ընկերության հետ իրականացվող բիզնեսի նկատմամբ կկիրառվի Գործարար էթիկայի ամենաբարձր ստանդարտը:*

1. Լրացուցիչ աշխատանքային նորմեր

Ի լրումն Կանոնների «Աշխատանքային նորմերի և սոցիալական պատասխանատվության» նորմերի՝ «Tiffany» ընկերությունը ուղղակիորեն արգելում է Գործընկերներին օգտագործել դատապարտյալների աշխատուժը և խտրականություն դրսևորել՝ հիմնված ընտանեկան կարգավիճակի, երեխաների առկայության, վետերանի կարգավիճակի կամ գործող օրենսդրության համաձայն՝ խտրականության որևէ այլ հիմքի հիման վրա: «Tiffany» ընկերությունը Գործընկերներից նաև պահանջում է քայլեր ձեռնարկել աշխատակիցների և այցելուների անվտանգությունն ու ապահովությունն ապահովելու համար (ի լրումն արտադրանքի և նյութերի կորուստը, վնասը կամ գողությունը կանխելու համար ձեռնարկվող միջոցների), ինչպես նաև ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը՝ անվտանգության ապահովման հետ կապված իր գործունեության բոլոր առումներում (ներառյալ անվտանգության ապահովման անձնակազմի, աշխատակիցների և այցելուների միջև փոխհարաբերությունները): Եթե կիրառելի է, Գործընկերներին խրախուսվում է անվտանգության ապահովման միջոցառումներ իրականացնելիս հետևել Անվտանգության և մարդու իրավունքների կամավոր սկզբունքներին: Ինչ վերաբերում է արտաժամյա աշխատանքի վարձատրությանը, «Tiffany» ընկերության Գործընկերները պետք է վճարեն սովորական ժամավճարի 125%-ից ոչ պակաս՝ համաձայն ԱՄԿ-ի կոնվենցիաների, եթե համապատասխան երկրում արտաժամյա աշխատանքի վարձատրության նվազագույն դրույքաչափ սահմանված չէ:

---

*«Tiffany» ընկերության՝ արտադրության և մատակարարման շղթայի գործընկերների համար լրացուցիչ պահանջները և ուղեցույցները
կարելի է գտնել *Tiffany ընկերության Մատակարարների Գործարար Էթիկայի ուղեցույցում*:

2. Հետագծելիության լրացուցիչ չափանիշներ

Ի լրումն Կանոնների «Բնապահպանական պահանջներին համապատասխանությունը և արտադրողականությունը» բաժնի ստանդարտների՝ «Tiffany» ընկերության՝ արտադրության և մատակարարման շղթայի գործընկերներին խրախուսվում է հետևել ՏՀԶԿ-ի՝ համապատասխանության ստուգման չափանիշներին և հասնել լիարժեք հետագծելիության իրենց մատակարարման շղթայում: Գործընկերները պարտավորվել են հետևել «Tiffany» ընկերության՝ աղբյուրի երաշխավորման բոլոր ընթացակարգերին և աղբյուրների վերաբերյալ այլ պահանջներին, որոնք ժամանակ առ ժամանակ սահմանվում են «Tiffany» ընկերության կողմից նյութերի աղբյուրների վերաբերյալ: Բացի այդ, գործընկերները պետք է ունենան և հետևեն փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությանը՝ համաձայն այն շուկաների չափանիշներին, որտեղ նրանք գործում են:

3. Tiffany ընկերության անանուն թեժ գիծ

Բացի LVMH ընկերության անանուն թեժ գծից, «Tiffany» ընկերության աշխատակիցները և շահագրգիռ կողմերը կարող են օգտվել «Tiffany»ընկերության հատուկ անանուն թեժ գծից (որը հասանելի է Tiffany.com կայքի միջոցով կամ https://tiffany.ethicspoint.com հասցեով): «Tiffany» ընկերության Գործընկերները կարող են «Tiffany» ընկերության անանուն թեժ գծով (ի լրումն կամ որպես այլընտրանք LVMH ընկերության անանուն թեժ գծի կամ «Tiffany» ընկերությունում իրենց կոնտակտային անձանց) տեղեկացնել ցանկացած պահանջների, հրահանգների, սկզբունքների, քաղաքականությունների կամ կիրառելի օրենքների կամ կանոնակարգերի խախտումների (կամ խախտումների ռիսկերի) և այլ լուրջ հարցերի կամ մտահոգությունների մասին: Հնարավոր սխալ վարքագծի մասին բարեխղճորեն տեղեկացնելը չի ազդի Գործընկերոջ՝ «Tiffany» ընկերության հետ հարաբերությունների վրա: «Tiffany» ընկերության անանուն թեժ գծով ներկայացվող բոլոր տեղեկացումները կմնան անանուն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ զանգահարողը ցանկանում է, որ իր անունը նույնականացվի, երբ վտանգված են անձի կենսական շահերը կամ երբ նույնականացումը պահանջվում է օրենքով:

4. Տարածման, վերահսկման և կիրարկման լրացուցիչ չափանիշներ

«Tiffany» ընկերության Գործընկերները պատասխանատու են իրենց գործունեության ընթացքում Կանոնները և սույն՝ Կանոնների Հավելվածը հասկանալու և կիրառելու համար, և, համապատասխանաբար, պետք է Կանոնները և Կանոնների սույն Հավելվածը տրամադրեն բոլոր աշխատակիցներին՝ տեղական բոլոր կիրառելի լեզուներով և ինքնուրույն վերահսկվեն: Գործընկերները նաև պատասխանատվություն են կրում՝ ապահովելու, որ ցանկացած հաստատված ենթակապալառուները հասկանան և հետևեն Կանոններին և Կանոնների սույն Հավելվածին: Կանոնների «Վերահսկողություն և տեղեկատվության հասանելիություն» բաժնի համապատասխան լիազորված ցանկացած հսկողության կամ աուդիտի ընթացքում «Tiffany» ընկերությունը պահանջում է, որ Գործընկերոջ աշխատակիցները կարողանան ազատ հաղորդակցվել ղեկավարության ներկայությունից դուրս և առանց վրեժխնդրության սպառնալիքի: Չնայած «Tiffany» ընկերությունը ձգտում է համագործակցել իր Գործընկերների հետ՝ գործունեության պատասխանատու իրականացման շարունակական բարելավման նպատակով, «Tiffany» ընկերությունն իրեն իրավունք է վերապահում չեղարկել չկատարված գնման պատվերները, կասեցնել ապագա գնումների պայմանագրերը կամ դադարեցնել իր հարաբերությունները Գործընկերոջ հետ, երբ հանգամանքները դա կպահանջեն:

<u>Գործընկերոջ հաստատումը</u>

Ստորագրված է առ _____ (օր) _____ (ամիս), _____ (տարի) դրությամբ

Գործընկերոջ անվանումը՝ _____

Գործընկերոջ հասցեն՝

_____

Գործընկերոջ DUNS #-ը՝ _____

Գործընկերոջ ներկայացուցչի անուն-ազգանունը և պաշտոնը՝

_____

Գործընկերոջ ներկայացուցչի ստորագրությունը՝ _____

Կտրել (եթե կիրառելի է)՝ _____